ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 193 – Ա **18 մայիսի 2020թ.**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 8 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384 – Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետը

որոշում եմ՝

1. Քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային ծառայությունների պետեր նշանակել՝

Մկրտչյան Արթուր	- հասարակական կարգի պահպանման ծառայության պետ, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/
Մուշեղյան Յուրա	- նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ
Զոհրաբյան Արմեն	- ինժեներական ծառայության պետ, մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Համբարձումյան Համբարձում	- բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ, մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Վարդանյան Լուսինե	- բժշկական ծառայության պետ, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար
Սարգսյան Նելսոն	- առևտրի և սննդի ծառայության պետ, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Գալոյան Մամիկոն	- կապի ծառայության պետ, մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
Սուչյան Խաժակ	- բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ, մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ
Խաչատրյան Գևորգ	- տրանսպորտային ծառայության պետ, մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Բիձյան Հակոբջան	- կոմունալ տեխնիկական ծառայության պետ, մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ
Մարկարյան Վաղինակ	- էներգետիկայի ծառայության պետ, «Հայ ԷՑ» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղի Գավառի էլցանցի պետ /համաձայնությամբ/

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 6-ի «Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 17-ի N 38 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 8–Ա կարգադրությունը:

18.05.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ